ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

20 հունիսի 2019 թ., ԿԽ-004/1

Դատավորների, դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց և դատախազների վերապատրաստման խմբերում փոփոխություն կատարելու և վերապատրաստման ժամաքանակի հաշվարկման վերաբերյալ

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) ռեկտորի առաջարկությունը՝ **Խորհուրդը որոշում է.**

1. Վերապատրաստման խմբերում փոփոխություն կատարում է Ակադեմիայի ռեկտորը՝ ունկնդրի դիմումի, Ուսումնական հարցերի հանձնաժողովից կամ ՀՀ գլխավոր դատախազությունից ստացված գրության հիման վրա:
2. Վերապատրաստման խումբը փոխելու անհրաժեշտության դեպքում դրա վերաբերյալ դիմումն ուղարկվում է փոստային եղանակով՝ ոչ ուշ, քան դասընթացները սկսվելուց առնվազն տասը օր առաջ կամ Ակադեմիայի էլեկտրոնային փոստի հասցեին՝ info@justiceacademy.am, ոչ ուշ, քան դասընթացները սկսվելուց առնվազն հինգ օր առաջ, բացառությամբ անհաղթահարելի ուժի գործողության դեպքերի:
3. Ունկնդրի դիմումի պատասխանն ուղարկվում է դիմումատուի աշխատանքի վայրի հասցեին՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով:
4. Վերապատրաստման դասընթացների ավարտից հետո Ակադեմիան կատարում է վերապատրաստման դասընթացներին ունկնդրի մասնակցության ժամաքանակի հաշվարկ՝ ունկնդիրներին տրամադրված համարակալված էլեկտրոնային քարտերով արձանագրված տվյալների հիման վրա:
5. Վերապատրաստման դասընթացներին ունկնդրի մասնակցության՝ սահմանված ժամաքանակից պակաս լինելու դեպքում Ունկնդրին հնարավորություն է տրվում այն լրացնել այլ խմբերում:
6. Պարտադիր վերապատրաստման դասընթացներից բացի, Ակադեմիայի կողմից կազմակերպված կամ Ակադեմիայի մասնակցությամբ իրականացված այլ դասընթացների, սեմինարների, գիտաժողովների և նմանատիպ այլ միջոցառումների մասնակցության ժամաքանակը համարվում է վերապատրաստման ժամաքանակի բաղկացուցիչ մաս:

Նախագահ՝ ***Ա. Հարությունյան***